


ИСТОРИЯ

Արցախի կրթական կյանքի արտացոլումը «Նոր դար» թերթի էջերում (20-րդ դարի սկիզբ)

Հարությունյան Մարինե Գ.
պատմական գիտությունների թեկնածու, ավագ գիտաշխատող
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)
 <https://orcid.org/0009-0000-1746-8708>
marina-arutunyan@mail.ru

ՀՏԳ՝ 070, 930.2(479.25); EDN: HEDTII

DOI: 10.58587/18292437-2025.3-60

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ մշակույթ, Արևելյան Հայաստան, Արցախի թեմ, թեմական դպրոց, ռեալական ուսումնարան, Շուշի, Գանձակ, եկեղեցական-ժխական դպրոց, «Նոր դար» հասարակական-գրական թերթ

Отражение образовательной жизни Арцаха на страницах газеты «Нор Дар» (начало XX века)

Арутунян Марине Г.

Кандидат исторических наук, старший научный сотрудник
Институт истории Национальной академии наук Республики Армения (Ереван, РА)

Аннотация. Роль и значение национальной школы подчеркивается в системе изучения многовековой истории армянской культуры. Особо подчеркивается роль образования в сохранении национальных ценностей и традиций.

В статье представлен ряд вопросов, связанных с образовательной жизнью Арцаха – одного из регионов Восточной Армении в начале XX века, на основе материалов, опубликованных в газете «Нор Дар». Мы также кратко коснулись политики царизма на Кавказе, процесса закрытия и открытия армянских школ в Арцахской епархии. Были изучены образовательные проблемы различных населенных пунктов Арцахской епархии, связанные со школьными программами, жалобами учеников и учителей, деятельностью школьных инспекторов. По материалам газеты представлена новая информация о епархиальных и реальных школах Арцаха, Гандзакской гимназии, женской школе «Св. Нуне», Гандзакской коммерческой школе, Гандзакской городской школе, Гадрутской женской школе, ковроткацких и ремесленных школах некоторых сел Арцаха, а также о школе ковроткачества села Геташен. Кратко освещены обстоятельства, препятствовавшие развитию образовательной жизни в Арцахе (связанные с армяно-татарскими столкновениями 1905-1907 гг.), а также деятельность отдельных учителей. Мы также представили благотворительную деятельность отдельных лиц, основанную на материалах газеты «Нор Дар».

Ключевые слова и словосочетания: культура, Восточная Армения, Арцахская епархия, епархиальная школа, реалистическая школа, Шуши, Гандзак, церковно-приходская школа, общественно-литературная газета «Нор Дар»

The Reflection of the Educational Life of Artsakh on the pages of the Newspaper "Nor Dar" (early XX century)

Harutyunyan Marine G.

Candidate of Historical Sciences, Senior Researcher
Institute of History of the National Academy of Sciences of the Republic of Armenia (Yerevan, RA)

Abstract. The role and significance of the national school is emphasized in the system of studying the centuries-old history of Armenian culture. The role of education is emphasized especially in the preservation of national values and traditions.

The article presents a number of issues related to the educational life of Artsakh, one of the regions of Eastern Armenia at the beginning of the 20th century based on materials published in the "Nor Dar" newspaper. We have also briefly touched upon the policy of Tsarism in the Caucasus, the process of closing and reopening Armenian schools in the Artsakh Diocese. The educational problems of various localities of the Artsakh Diocese were studied related to school programs, student and teacher complaints and the activities of school supervisors. According to the materials of the newspaper, new information was presented on the Diocesan and Realakan schools of Artsakh, Gandzak Gymnasium School, "St. Nune" Girls School, Gandzak Commercial School, Gandzak City School, Hadrut Girls School, carpet weaving and handicraft schools of some villages of Artsakh, as well as carpet weaving school of the village of Getashen. The circumstances hindering the development of the educational life of Artsakh (related to the Armenian-

Tatar clashes of 1905-1907), the activities of individual teachers were briefly highlighted. We have also presented the charitable works of individual individuals, based on materials from the "Nor Dar" newspaper.

Keywords and phrases: culture, Eastern Armenia, Artsakh Diocese, Diocesan School, Realakan School, Shushi, Gandzak, church-parish school, "Nor Dar" social-literary newspaper

Ներածություն

20-րդ դարի սկզբներին Արևելյան Հայաստանում աստիճանաբար խորացավ տնտեսական, քաղաքական ճգնաժամը: Խնդիրը կայանում է նրանում, որ 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Կովկասում հաստատված գոյիցինյան ռեժիմը (Գրիգորի Գոյիցին՝ Կովկասի կառավարչապետ՝ 1896-1904 թթ.) [4, էջ 1] ուժեղացրեց հայահալած քաղաքականությունը [80, էջեր 165-168; 82]: Սկսեցին փակվել հայկական դպրոցները, խիստ հսկողության տակ դրվել հայ մամուլը [63]: Արգելվել էր մամուլում շոշափել ազգային հարցերը, հաղորդումներ գետնեղել Արևմտյան Հայաստանի և առհասարակ Հայկական Հարցի մասին, ինչպես նաև նոր պարբերականների հրատարակությունը:

Ցարիզմի քաղաքականությունը մեծ հուզումներ առաջացրեց Անդրկովկասի տարբեր վայրերում, այդ թվում նաև Արցախի թեմում¹: Ժողովրդական պայքարն ամենուրեք լայն բնույթ ստացավ, տարածվում էին հեղափոխական կոչեր, թռուցիկներ և այլն: Ռուսական առաջին հեղափոխության [62, էջեր 3-14; 83] նախօրյակին, Արցախի աշակերտության շրջանում ստեղծվել էր լարված մթնոլորտ:

Հայերի դեմ ծավալված ուժգին հալածանքի պայմաններում, ինչպես հայոց մնացած թեմերում, այնպես էլ Արցախի թեմում կրթական գործի զարգացման համար ստեղծվեցին անբարենպաստ պայմաններ. կառավարության որոշմամբ մոտ տասը տարի շարունակ (1896-1905 թթ.) փակվեցին հայկական դպրոցները: Էջմիածնի Սինոդի ներկայացրած Արցախի թեմի առաջնորդի տեղեկագրի համաձայն՝ ամբողջ Արցախի թեմում 1903-1905 թթ. փակվող դպրոցների քանակը հասնում էր 25-ի, գործազուրկ ուսուցիչների թիվը՝ 30-ի, աշակերտությանը՝ 790-ի [2; 76, էջ 50]:

Հայ մշակույթի ու կրթական օջախների նկատմամբ ցարական կառավարության ցուցաբերած բռնությունները չէին ընկնել հայերին: Ընդհակառակը, նրանց մեջ ավելի էր ուժեղացել քաղաքական ու ազգային ինքնագիտակցությունը, հայրենասիրության ոգին, ազգապահ-

պանման ձգտումները: Քանի որ նոր սկզբունքներով գործող հայկական դպրոցներում հայոց լեզու ու գրականություն չէր դասավանդվում, հայ ծնողներն իրենց երեխաների կրթությունը հայոց լեզվով գերադասում էին կազմակերպել տնային պայմաններում: Դրա համար հայաբնակ տարբեր վայրերում սկսեցին ստեղծվել մայրենի լեզվով կրթություն տվող գաղտնի դպրոցներ:

Ռուսական առաջին հեղափոխության (1905 թ.) վերելքը ստիպեց ցարիզմին վերանայելու հայերի նկատմամբ տարվող իր քաղաքականությունը: 1905 թ. օգոստոսի 1-ին որոշում ընդունվեց՝ 1903 թ. հունիսի 12-ի օրենքի վերացման մասին [1; 67, էջեր 338-346]: Որոշման համաձայն՝ թույլատրվեց Կովկասյան փոխարքայության սահմաններում եկեղեցիներին ու վանքերին կից բացել եկեղեցական-ծխական դպրոցներ [68]: Ամենայն հայոց կաթողիկոսի հատուկ կոնդակով ժողովրդին ազդարարվեց հրամանագրի մասին՝ բացել հայկական դպրոցները: Եվ այսպես, 1905-1906 թթ. ուս տարում Արցախի թեմում վերաբացվեցին հայկական դպրոցները [74]:

Խնդրո առարկայի հետ առնչվող տարբեր հարցեր արտացոլվել են Լեոյի [69], Ռ. Տեր-Գասպարյանի [81], Վ. Երկանյանի [68], Ս. Խուդոյանի [70, էջեր 354-383], Մ. Բարխուդարյանի [64], Վ. Բալայանի [65], Հ. Գրիգորյանի, Գ. Հարությունյանի [66], Գ. Հարությունյանի [72; 74; 75], Մ. Հարությունյանի [76] և ուրիշների [61; 77; 78] աշխատություններում: Ուսումնասիրվող ժամանակաշրջանի հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական, մշակութային բազմաթիվ խնդիրներ լուսաբանվել են նաև ժամանակի մամուլի կողմից: Արժևորելով վերոնշյալ հեղինակների գիտական ուսումնասիրությունները՝ ընդգծենք, որ ներկայացվող խնդիրը մանրակրկիտ չի դիտարկվել «Նոր դար» թերթում տեղ գտած նյութերի հիման վրա:



Ուսումնասիրության հիմնական նպատակն է՝ ներկայացնել Արևելյան Հայաստանի շրջաններից մեկի՝ Արցախի՝ 20-րդ դարի սկզբի կրթական կյանքի մասին նոր տեղեկություններ՝ հիմնված «Նոր դար» թերթում գետնեղված նյութերի վրա, տալ թերթի հոդվածների համեմատական վերլուծություններ:

¹ 1836 թ. մարտի 11-ի ցարական հրամանագրով, որը պատմության մեջ հայտնի է «Պոլոժենիե» անվամբ, ռուսական տիրապետության տակ գտնվող տարածքներում գործող Հայկական եկեղեցին բաժանվում է վեց թեմերի, որոնց մեջ հինգերորդը Արցախի թեմն էր: Արցախի թեմը գոյատևեց մինչև 1930թ., երբ խորհրդային իշխանության համաձայնությունը ստացած Աղբյուրեջանը փակեց այն: Արցախի թեմի մասին տե՛ս [79, էջեր 636-637]:

Թեմայի գիտական նորույթը պայմանավորված է թերթի մի շարք համարներում տեղ գտած նյութերի նորովի ներկայացմամբ:

Արցախի Թեմական դպրոցի գործունեության արտացոլումը «Նոր դար» հասարակական-գրական թերթում: Պարբերականն իր տարբեր համարներում անդրադառնում է Թեմական դպրոցի առանձին տեսուչների գործունեությանը, ուսուցիչների դասավանդման մեթոդներին, ուսումնական գործընթացին (ընդունելիության քննություններին [17, էջ 1; 11, էջ 1]), աշակերտների առաջադիմությանն ուղղված ծրագրերին, դպրոցական միջոցառումներին [8, էջ 2], դպրոցի շրջանավարտներին և այլ խնդիրներին:

20-րդ դարի սկզբի թերթի տարբեր համարներում կարևորվում է Թեմական դպրոցի տեսուչ Բենիկ վարդապետի [15, էջ 1] գործունեությունը: Նրա տեսչության ժամանակ Արցախի Թեմական դպրոցի աշակերտներն իրենց ակտիվ մասնակցությունն էին ունեցել տարբեր միջոցառումներին: Այս մասին թերթը գրում է. «*Թեմական դպրանոցի տեսուչ Հայր Բենիկը և ուսուցիչներն աշակերտներին պատրաստել են առաջիկայ տոներին երկու ներկայացում տալու: Առաջինը լինելու է զուտ աշակերտական, իսկ երկրորդը՝ աշակերտների ծնողների և դպրանոցով հետաքրքրվողների համար: Երկուսի մուտքն էլ ձրի էր*» [18, էջ 2]: Միջոցառումների շարքում կարևորվում է հինգերորդ դարի հայ ազատագրական շարժումների հերոսներին նվիրված հանդեսները («Վարդանանց տոն»): Հայր Բենիկի նախաձեռնությամբ Հոգևոր դպրոցում կազմակերպված հերթական միջոցառումն անցկացվեց լեւի – լեցուն դահլիճում: Հանդեսին ներկա էր Սրբազան առաջնորդը, տեսուչը, հոգաբարձությունը, աշակերտների ծնողները: Հանդեսը բացվեց «Նորահրաշ» շարականով, որը գեղեցիկ երգեց քառաձայն խումբը՝ ուսուցիչ Պոպոլյանի ղեկավարությամբ: Հնչեցվեցին դպրոցի ուսուցիչների և աշակերտների ելույթները [21, էջ 2; 29, էջ 2]:

Բենիկ վարդապետի տեսչության պաշտոնի ստանձման, ուսուցչական կազմի, ուսումնական ծրագրերի, դպրոցի որոշ կանոնների վերաբերյալ թերթի 1902 թ. հերթական համարը գրում է. «*Բենիկ վարդապետը իր երկամսեայ քաղաքայութիւնից յետոյ դարձել է Ծուշի և ստանձնել տեսչական պաշտոնը: Այս տարուայ ուսուցչական կազմի մէջ մտել են երկու նոր ուսուցիչ. մէկը պ. Դեմուրեան, իսկ միւսը՝ Հրաչեայ Անտեան՝ որը Սամուէլ Գիւլապեանի փոխարէն հայոց լեզու պէտք է դասաւանդի ... Կանոնաւոր ուսումը կսկսուի սեպտեմբերի մէկից: Վերացում է Լ. Մարգսեանի օրոք աշակերտների համար պատրաստուած գլխարկներին կպցնելիք նշանը: Նորը շատ յարմար է. մէջտեղը արծուի նշան է ...*» [33, էջ 2]: Հավելենք նաև, որ Սր. Էջմիածնի Սինողը

Ղարաբաղի կոնսիստորիայի գործողությունների կարգավորման, Ղարաբաղի Էջմիածնական կաթնամեղման վեստիսկան համար քննիչ է կարգել Թեմական դպրոցի տեսուչ Տեր Բենիկ վարդապետին՝ հրամայելով Գառնակերյան Սրբազան առաջնորդին բոլոր կաթնամեղման գործերը (սկսած 1898 թվականից մինչ 20-րդ դարի սկիզբը) հանձնել քննիչին՝ ուսումնասիրելու համար [42, էջ 1]: Թերթի մեկ այլ համար Բենիկ վարդապետին բնութագրում է որպես խիստ և կարգապահ անձնավորություն: Ըստ այդ տեղեկության՝ 20-րդ դարի սկզբներին Թեմական դպրոցում անընդհատ տեղի էին ունենում խռովություններ: Ծնորհիվ Բենիկ վարդապետի հմուտ և փորձառու ղեկավարության՝ դպրոցում տիրում էր խաղաղ կարգավիճակ: Հոգաբարձուները, տեսուչը և ուսուցիչները գործում էին համերաշխ: Մակայն, Սրբազան Գառնակերյան Առաջնորդը միջնորդել էր Վեհափառ Հայրապետի առաջ և հրամայել հոգաբարձուներին արձակված համարել Բենիկ վարդապետին տեսչական պաշտոնից: Նախատեսվում էր նրա տեղը նշանակել Տաթևի փոխանորդ Ներսես վարդապետ Մելիք Թանգյանին [44, էջ 2]: Բենիկ վարդապետի հասարակական-կրթական գործունեության ասպարեզը բնութագրվում է նաև թերթի այլ համարներում [49, էջ 3; 50, էջ 1]:

Բենիկ վարդապետից բացի, թերթը որպես Թեմական Հոգևոր դպրոցի տեսուչ հիշատակում է Մաթեոս վարդապետին և տեսչի պաշտոնակատար Չուրաբեանցին: Վերջինս յոթ տարի վարել է ուսուցչի պաշտոնը նույն դպրոցում և հայտնի էր որպես բարեխիղճ ուսուցիչ [52, էջ 1]:

20-րդ դարի սկզբի թերթի տարբեր համարներում գետեղվել են որոշակի տեղեկություններ Թեմականի ուսուցիչների դասավանդման մեթոդների, ուսուցման արդյունավետ միջոցների և ձևերի վերաբերյալ: Անվանի ուսուցիչների շարքում ընդգծվում է Հ. Հովհաննիսյանի դերը, որն ինչպես նշում է թերթը, օգտակար ուսուցիչ էր ճանաչված: Հիշատակվում են նույն դպրոցի ուսուցիչներ Մանասեանցի, Արշակ Տեր-Միքելեանի [52, էջ 1], Գաբրիել Ղուլիքեխայեանի [58, էջ 3] անունները:

Դպրոցական միջոցառումների մասին թերթի 1900 թ. համարներից մեկը նշում է, որ հունվարի 1-ին հոգևոր դպրոցի դահլիճում աշակերտները խաղացել են Գ. Սուևորուկյանի «Պեպո» և Ժան Մոլիերի «Բռնի ամուսնություն» վոդևիլները, որտեղ կանացի դերերը աշակերտներն էին խաղացել [7, էջ 2]: Իսկ թերթի 1901 թ. համարներից մեկը գրում է. «*Գրական հանդեսներ և նշանաւոր տօներ այս տարի Ծուշու Հոգևոր դպրոցում կրկնուել են մի քանի անգամ ճոխ և քաղաքակրթմանի ծրագրով և գրաւել են ամեն անգամ քաղաքայի երկսեռ հասարակոյթուն: Հայրասպետական տօնն ի նկատի ունեցած,*

դպրոցական վարչությունը յուն. 14-ին, կիրակի օրը, երեկոյան, կազմել էր մի փառատոր հանդես, ուր տեսչի հրահրանքով ժողովուրդ էին դպրոցի ընդհանուր դահլիճը պատուաւոր քաղաքացիներ, աշակերտների ծնողներ, ուրիշ կողմնակի անձեր և ռէպրակսն ու քաղաքային դպրոցի աշակերտներ ...» [19, էջ 2]:

Հանախ Թեմական դպրոցի աշակերտների ներկայացումներից ստացված շահույթը ուղղվում էր ի օգուտ աղքատ աշակերտների կրթությանը [22, էջ 3]:

Դպրոցական միջոցառումների շարքում թերթի 1902 թ. համարներից մեկում հիշատակվում է Վեհափառ Հայրապետի անվանակոչության առթիվ, հունվարի 14-ին Թեմական դպրանոցի նոր շինության դահլիճում տեղի ունեցած հանդեսի մասին: Ուշագրավ էին Վեհափառ Հայրապետի անվանը նվիրված երգերը: Բարձր ծափահարություններով ողջունվեց հատկապես վեցերորդ դասարանի աշակերտ Տերտերյանի ինքնուրույն շարադրության ընթերցումը՝ «Բարձր դասի աղքատություն» խորագրով [26, էջ 2]: Իսկ թերթի այլ համար հիշատակում է Թեմական դպրոցում Դեմուրյանի ղեկավարությամբ տեղի ունեցած աշակերտական մեկ հանդեսի մասին, որը երգեց «Տէր կեցո զհայս» երգը [37, էջ 2]: Թերթը հիշատակում է Թեմական դպրոցի դահլիճում Գ. Միրզայեանի տված համերգի մասին, որն անցկացվեց հոծ բազմության ներկայությամբ [51, էջ 2]:

Թեմական դպրոցի շրջանավարտներից թերթը հիշատակում է Հակոբ (Յակովբ) Ճաղարբեգյանին, ով մի քանի տարի վարել էր Շամախու հոգևոր դպրոցի տեսչի պաշտոնը, այնուհետև դասավանդել էր Շուշիի թեմական և օրիորդաց դպրոցներում որպես հայոց լեզվի և հայոց պատմության ուսուցիչ [6, էջ 2; 7, էջ 2]: 20-րդ դարի սկզբի Թեմական դպրոցի շրջանավարտների շարքում հիշատակվում է նաև հետևյալ անունները՝ Պարոնյան Սարգիս, Տերտերյան Արսեն, Հայրապետյան Լևոն, Բաղդասարյան Գերասիմ, Մելիք-Շահնազարյան Գևորգ և ուրիշներ [31, էջ 2]:

Թերթում կան որոշ հետաքրքիր տեղեկություններ Արցախի Թեմական դպրոցի ներքին ծրագրերի վերաբերյալ, որոնք առնչվում են առանձին անհատների բարեգործական աշխատանքների հետ. «Մեր Թեմական դպրոցի այս տարուայ շրջանաւարտներից երկուսին, ինչպէս շում ենք, մեր հարուստներից մի երկուսն ուղարկում են Կիևի համալսարանը՝ գիւղատնտեսութիւն սովորելու: Բարեարարներն յիշեալ աշակերտներին օգնում են այն պայմանով, որ վերջիններս ուսումը ստանալուց յետոյ անպատճառ իրենց հայրենի գիւղերում քահանայ լինեն: Ծեմարանաւարտ ուսուցիչ պարոն Ալէքսանդր Թարխանեան քահանայական պաշտօն պիտի ստանձնի տեղիս Ագուլեաց (Ագուլեաց) եկեղեցում, նրա ընկեր ուսուցիչ պարոն Ա. Տէր Ոսկանեան ևս իւր հայրենի գիւղումն է քահանայ լինելու» [24, էջեր 1-2]:

Ընդգծենք, որ ողջունելի է դպրոցների նման ծրագրերի իրագործումը, քանզի այլ զարգացած երկրներում կրթված հայ երիտասարդները վերադառնալով իրենց հայրենիք, իրենց գիտական փորձը կարող են կիրառել հայրենիքի սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային տարբեր բնագավառների զարգացման գործընթացում:

«Նոր դար» պարբերականն իր տարբեր համարներում անդրադառնալով Արցախի (Ղարաբաղի) թեմի գործունեությանը, կարևորում է մի քանի թեմակալ առաջնորդների (թեմակալ առաջնորդ Սրբազան Գառնակերեան [20, էջ 2; 43, էջ 2; 39, էջ 1], Աշոտ եպիսկոպոս [54, էջ 1]) դերը Արցախի կրթական կյանքի բարելավման գործընթացում: Թերթն իր համարներից մեկում հիշատակում է, որ տէր Հովհաննես եպիսկոպոս Շիրակունին հաստատվեց որպես թեմի առաջնորդ: Տեղի բնակիչները ողջունելով Տեր Սրբազանի ընտրությունը, անհամբեր սպասում էին, որ նա կարճ ժամանակաընթացքում կարգավորեր ծանր իրավիճակում գտնվող կրթական գործը [14, էջ 2]: Թերթը հիշատակում է Մինոդի անդամ Աշոտ վարդապետին, ով անձամբ այցելում էր Ղարաբաղի վանքերից Ամարասը, Ղևոնդեանց անապատը և Գանձասարը՝ վանքերի վիճակների մասին տեղեկություններ հավաքագրելու համար [10, էջ 2]: Աշոտ վարդապետի միջնորդությամբ, շուշեցի մի բարերարի հովանավորությամբ մի ճեմարանավարտ աշակերտ ուսումը շարունակեց արտասահմանում, իսկ տիկին Եղիսաբեթ Սարգսյանն օգնություն ցուցաբերեց մեկ աղքատ ընտանիքի [12, էջ 2]:

Իսկ թերթի մեկ այլ համար Աշոտ եպիսկոպոսի՝ որպես թեմակալ առաջնորդի մասին նշում է. «...Կոնստանտնուպոլսի ինստիտուտի Գառնակերեան եպիսկոպոսը մեր թեմի առաջնորդութիւնից արձակուեց և նրա տեղը նշանակուեց Աշոտ եպիսկոպոս Շահնեանը: Նորեկ թեմակալի առաջին գործն այն եղաւ, որ կոնստանտնուպոլսի երկու պաշտօնեաներին – Մ. Տէր-Սարգսեանին (ատենապետ) և Յ. Մելիք-Շահնազարեանին խապառ արձակեց ծառայութիւնից...» [59, էջ 3]:

Հարկ է նշել, որ Թեմական դպրոցի տեսուչները նշանակվում էին Արցախի թեմի Սրբազան առաջնորդի միջնորդությամբ և նրա անմիջական համաձայնությամբ: 20-րդ դարի սկզբի թերթի համարներից մեկում նշվում է, որ Ս. Էջմիածնից՝ Սրբազան առաջնորդի անունով ստացվեց մի կոնդակ, որով պատվիրվում է չխառնվել Թեմական դպրոցի տեսչական խնդրին: Կոնդակի մեջ ասվում էր, որ այսուհետ Սր. Էջմիածնից կլինեն դպրանոցի տեսչության վերաբերյալ կարգադրությունները: Սրբազան

առաջնորդը հրաժարվեց դպրոցի հոգաբարձության նախագահությունից և այդ պաշտոնը հանձնեց կոնսիստորիայի երկու հոշակավոր գրագիրներից անբաժան երրորդություն կազմող մի քահանայի [38, էջ 2]:

Ընդգծենք, որ Արցախի կրթական կյանքի զարգացման գործընթացում նշանակալի է առանձին բարերարների, Հայոց բարեգործական ընկերության դերակատարությունը: «Նոր դար» պարբերականի համարներից մեկն այս մասին գրում է. «Շուշի, 27 օգոստոսի. Շատ աշակերտներ վերջացնելով մի որևէ միջնակարգ դպրոց, դիմում են զանազան բարերարների, որպեսզի վերջիններս նրանց օգնություն տան կատարելագործելու իրենց ուսումը Ռուսիայի և կամ արտասահմանի համալսարաններում: Փաստերը ցոյց են տալիս, որ այդ ուսանողներից շատ շատերին յաջողում է ավարտել իրենց ուսումը շնորհիւ այդ բարերարների...» [16, էջ 2]: Նույն թվականի մեկ այլ համարում թերթը հիշատակում է Բանանց գյուղի (Գանձակ գավառում²) բնակիչ Միքայել Չոփոյանի մասին, ով իր կարողությունից մոտ 1000 ռուբլի է կտակել զանազան բարեգործական նպատակների համար [14, էջ 2]:

«Նոր դար» պարբերականը հետաքրքիր տեղեկություն է հաղորդում վաճառական Օհանջան Թադեոսեանցի մասին, ով նվիրաբերություններ էր արել ամեն մի եկեղեցուն 500 ռուբլի, իսկ Արցախի դպրոցներին 200-ական ռուբլի [9, էջ 2]: Թերթը հիշատակում է մոսկվայաբնակ շուշեցի բարեգործ Հ. Ժամհարյանի մասին, ում նախաձեռնությամբ Շուշի քաղաքում կառուցվեց հիվանդանոց³: Վերջինիս բացման մասին թերթի 20-րդ դարի սկզբի համարներից մեկը վկայում է, որ հիվանդանոցի բացման նախաձեռնությունը պատկանում է Ժամհարյան եղբայրներին [34, էջ 2], որոնք այդ նպատակով 110,000 ռուբլի և փառահեղ մի շինություն են նվիրել քաղաքին [25, էջ 2]: Նվիրատուների շարքում թերթը նշում է արցախցի Արզուման բեկ

Ավանյանցի անուն, ով երկար տարիներ վարում էր տեղի արքունական գանձարանում գանձապահի պաշտոնը: Վերջինիս մահից հետո, նրա որդիք 200 ռուբլի են նվիրաբերել Թեմական դպրոցին, 50 ռուբլի՝ Շամախու երկրաշարժից վնասվածների օգտին [28, էջ 2]:

Հայոց բարեգործական ընկերության օժանդակությամբ Արցախում 20-րդ դարի սկզբներին շարունակում էին գործել գրադարան-ընթերցարանները, որոնցում հավաքագրված հայ մեծ գրողների, ինչպես նաև օտարալեզու գրականության շնորհիվ աշակերտները ստանում էին լրացուցիչ գիտելիքներ: Քաղաքական և սոցիալական որոշ խնդիրների պատճառով Շուշիում գործող գրադարան-ընթերցարանը [81, էջ 121] մի քանի անգամ փակվում ու կրկին բացվում է: Այս մասին «Նոր դար» թերթի 1901 թ. համարը նշում է. «Հայոց բարեգործական ընկերության գրադարանը երկար ժամանակ փակ մնալուց յետոյ վերջապես քաղաքային ինքնավարության ձեռքով բացուած է յունուարի 1-ից: Յանախորդները՝ թէ՛ աշակերտները և թէ՛ կողմնակի մարդիկ, պետք է վճարեն տարեկան 3 ռուբլի, ամսական 50 կոպեկ, իսկ մուտքը պետք է լինի 5 կոպեկ ...» [20, էջ 2]: Թերթի մեկ այլ համարում գետեղված Պող. Չաքաբյանի նյութից տեղեկանում ենք, որ 20-րդ դարի սկզբներին Շուշիի քաղաքային գրադարան-ընթերցարանը⁴ գտնվում էր շատ ծանր վիճակում: Հողվածագիրը սուր քննադատական մտտեցում է ցուցաբերում հատկապես հասարակության անտարբերության նկատմամբ՝ գրադարան-ընթերցարանի նման անտեսված վիճակի համար [36, էջ 3]:

20-րդ դարի սկզբներին ցարական կառավարությունը շարունակում էր ազգային դպրոցների նկատմամբ սահմանափակումները: Մյուս կողմից էլ, ինչպես վկայում է «Մուրճ» գրական, հասարակական և քաղաքական ամսագիրը, Թեմական դպրոցի մեջ խռովությունները հասան ծայրահեղության, խայտառակության [3, էջ 230]:

Հայերի կրթական գործի դեմ սկսած լայնածավալ հալածանքը միայն եկեղեցական-ժխական, իզական դպրոցներով չսահմանափակվեց: Ցարիզմը փակեց նաև թեմական դպրոցները, այդ թվում նաև Շուշիի թեմականը: Այս մասին Գ. Հարությունյանը հիմք ընդունելով Լեոյի գրությունը [69, էջ 578]՝ նշում է. «1903 թ. դեկտեմբերի 10-ին ստացվում է Էջմիածնի Սինդոքի հրամանը Կովկասի քաղաքական մասի կառավարչապետի կարգադրությամբ փակելու թեմական դպրոցը: Գանձակի նահանգապետը նախազգուշացնում է դպրոցի տեսուչներին, որպեսզի փակման ժամանակ անկարգություններ չլինեն, քանի որ տեղական իշխանությունները իսկույն կհնչեն դրանք: Դպրոցը

² Պատմական Հայաստանի Ուտիք նահանգում: Հետագայում ընդգրկվեց Հյուսիսային Արցախ կոչվող երկրամասի մեջ: Վերջինս ներառում էր պատմական Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգներից 3-ական գավառներ. Արցախից՝ Կողթ, Քուստ-ի-Փառնես և Մեծ Կողմանք, իսկ Ուտիքից՝ Տուս-Քուստակ Գարդման և Շակաշեն և այլն: Միջնադարում տարածքն ավելի հայտնի էր Գարդման անունով, իսկ ուշ միջնադարում կազմում էր Գանձակի խանությունը: Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո այն հայտնի էր Ելիզավետպոլի նահանգ անվամբ: Խորհրդային կարգերի հաստատումից հետո երկրամասը միացվեց Ադրբեջանին և տրոհվեց վարչական մի քանի շրջանների: Մանրամասն տե՛ս [71]:

³ Հ. Ժամհարյանը դեռ 1899 թ. խոստացել էր իր հայրենի քաղաքում բացել հիվանդանոց, դեղատուն, որոնց համար խոստացել էր 100.000 ռուբլի: Վերջինս բացվեց 20-րդ դարի սկզբին՝ օգոստոսի 2-ին, մեծ հանդիսավորությամբ (տե՛ս «Նոր դար», 1902, N 103 (10 օգոստոսի), էջ 2): Քաղաքում գործում էր նաև զինվորական հիվանդանոց (տե՛ս [27, էջ 2]:

⁴ Թերթի 1903 թ. համարներից մեկում քաղաքի գրադարանապետ է հիշատակվում Պողոս Չաքաբյանը: Տե՛ս [44, էջ 2]:

փակելուց հետո ամբողջ գույքը ցուցակագրելով, հանձնվում է առաջնորդին, իսկ շինությունը օրենքի համաձայն անցնում է կառավարության ձեռքը՝ իբրև եկեղեցական իշխանությանը պատկանող կարվածք» [75, էջ 221]:

Արցախի Թեմական դպրոցը վերաբացվեց 1905 թ.: Ըստ Գ. Հարությունյանի կողմից տրամադրված տեղեկության՝ Թեմականը ավելի բարեկարգ տեսք էր ստացել 1908-1910 թթ.՝ տեսուչ Ավետիք Տեր-Պողոսյանի օրոք և նրա ջանքերով: 1913 թ. մեծ շուքով նշվել է դպրոցի 75-ամյակը (1838-1913), որի առթիվ և գրվել է Լեոյի գիրքը՝ նվիրված Թեմական դպրոցի պատմությանը [74, էջ 40]: Շուշիի թեմական դպրոցը դադարեցնում է իր գործունեությունը 1920 թ.:

Ռեալական ուսումնարանի գործունեության արտացոլումը «Նոր դար» հասարակական-գրական թերթի էջերում: Արցախի դպրոցների շարքում նշանավոր է Շուշիի Ռեալական ուսումնարանը, որը հիմնվել է 1881 թ. շուշեցի մեծահարուստ Մովսես Բեկի տանը: Այն համարվում է հայ մտավորականության դարբնոցը, որտեղ սովորել են մեծ թվով հայ մշակույթի նշանավոր ներկայացուցիչներ [66]: «Նոր դար» թերթի 1900 թ. համարներից մեկն արժևորելով Արցախի Ռեալական դպրոցի դերն ու նշանակությունը՝ կարևորում է հատկապես Գ. Առափելանցի և Բ. Մարդանեանցի դերը դպրոցի կառուցողական աշխատանքներում [13, էջ 2]:

Ռեալական ուսումնարանն իր 40-ամյա գործունեության (1881-1920) տարիներին այքի էր ընկել իր մի շարք հասարակական, մշակութային միջոցառումների կազմակերպմամբ [66, էջ 20]: Ուսումնարանի գործունեությունը որոշակիորեն լուսաբանվել էր ժամանակի արևելահայ պարբերական մամուլի կողմից: «Նոր դար» պարբերականը ևս ինչ-որ չափով անդրադարձել էր այդ դպրոցին:

20-րդ դարի սկզբի «Նոր դար» թերթի համարներից մեկում անդրադարձ է կատարվում Ռեալական դպրոցի աշակերտների մասնակցությամբ հերթական հանդեսի մասին: Ըստ այդ տեղեկության՝ Խանդավազյանի թատրոնական դահլիճում Ռեալական դպրոցի աշակերտները՝ ռուս արձակագիր, դրամատուրգ, բանաստեղծ, գրաքննադատ Նիկոլայ Վասիլևիչ Գոգոլի մահվան հիսունամյակի առթիվ մի գրական ցերեկույթ սովեցին, որին հրավիրված էին Արցախի թեմի Սրբազան առաջնորդը և ուրիշ պատվավոր անձիք: Հրավիրվածների շարքում հիշատակվում են քաղաքային տղայոց և օրիորդաց դպրոցների տեսուչները՝ իրենց ուսուցչական խմբերով [30, էջ 2]: Յուրաքանչյուր ներկայացումների շարքում առանձնակի շեշտադրմամբ է ներկայացվել Գոգոլի «Ամուսնություն» (Женитьба) կատակերգությունը [30, էջ 2]:

1905 թ. հայկական դպրոցների մեծ մասի վերաբացումից հետո, Արցախում հայկական դպրոցները շարունակում էին կանգնել մի շարք խնդիրների առաջ: Ռեալական դպրոցում ևս կատարվեցին որոշ փոփոխություններ, որոնք բացասական ազդեցություն ունեցան երեխաների կրթության զարգացման վրա: Նշենք այդ խոչընդոտներից մեկի մասին. խնդիրը կայանում է նրանում, որ Ռեալական դպրոցի պատրաստական և առաջին դասարաններին զուգընթաց դասարանները տեղափոխվել էին Շուշիի թուրքական թաղամասում գտնվող Վեզիրովի տուն, սակայն հայ երեխաների ծնողները մերժել էին իրենց երեխաներին այդ թաղամաս ուղարկել՝ գիտակցելով սպասվող վտանգը [59, էջ 3]:

Արցախի այլ վայրերի դպրոցները: «Նոր դար» թերթի 1900 թ. համարը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Գանձակի [5, էջ 2] (Հյուսիսայի Արցախ[71]) կրթական խնդիրների, առանձին ուսուցիչների, դպրոցների և այլ հարցերի վերաբերյալ: Հիշատակվում է գանձակեցի նախկին ուսուցիչ Ա. Շախսուվարյանի անունը, ով Թիֆլիսում ստացավ քահանայի կոչում: Վերջինս ձեռնադրվել էր հանգուցեալ Եղիշե քահանա Ադիբեկյանի տեղը [12, էջ 3]: Կան որոշակի տեղեկություններ Գանձակի գիմնազիայի (հիմնված՝ 1881 թ. [5, էջ 3]) և «Սբ. Նունե» կոչվող օրիորդաց դպրոցի (հիմնված՝ 1885 թ. [5, էջ 3]) վերաբերյալ [12, էջ 3; 31, էջ 2]:

Ուշագրավ է թերթում զետեղված տեղեկությունը Գանձակի առևտրական դպրոցի վերաբերյալ, որի բացման շուրջ առաջացել էին մի շարք խնդիրներ և տարաձայնություններ [34, էջեր 2-3]: Զաղաքում գործում էին նաև աշակերտներից բաղկացած առանձին երաժշտական խմբեր, որոնք մասնակցում էին եկեղեցական *պատարագներին և այլ* արարողություններին: Այս մասին ուշագրավ նյութ է զետեղվել թերթի 1902 թ. համարներից մեկում. «Սբ. Յովիսանու եկեղեցու նորրևտիք երեցփոխ-գանձապետ պ. Մ. Նաբաթեանի ջանքերով վերջապես կազմում է երգեցիկ խումբ, որի համար արդեն հրավիրուած է յատուկ ուսուցիչ, 600 ռ. տարեկան ռոճիկով: Խումբն առաջին անգամ կերգէ Վարագայ Ս. Խուսի տօնին, նոյն եկեղեցում ...» [35, էջ 1]: Նույն համարում հիշատակվում է քաղաքի գրադարանը՝ թերթարանի մասին, որն ավելի ուշ տեղափոխվեց հայոց եկեղեցու մոտ [35, էջ 1]: Վերջինս կարևոր դերակատարություն ունի աշակերտների կրթական մակարդակի զարգացման գործընթացում:

Թերթի 1903 թ. համարներից մեկում ներկայացվել է՝ նույն տարում Գանձակի քաղաքային դպրոցի [23, էջ 2] ավարտողների ընդհանուր թվաքանակը՝ ըստ ազգության. «Այս տարի Գանձակի քաղաքային դպրոցն ավարտել են 17 հոգի, մնում են 2 հոգի: Աւարտողներն ըստ ազգութեան

բաժանում են հետևեալ կերպով. հայ-13, մահ-մեղական-1, վրացի-1, գերմանացի -1» [46, էջ 2]:

Երեխաների մտավոր ընդունակությունների զարգացման գործում կարևորվում է Գանձակի գրադարան-ընթերցարանի դերը, որը 20-րդ դարի սկզբներին գտնվում էր վատ վիճակի մեջ [47, էջ 1]:

20-րդ դարի սկզբին Արցախում կրթական կյանքի բնականոն առաջընթացի և ծագած խոչընդոտությունների հաղթահարմանը նպաստող կարևոր գործոններից էին երկրամասի բնակլիմայական պայմանները: «Նոր դար» թերթի 1903 թ. համարներից մեկում գետեղված Ս. Հախումյանի հոդվածից տեղեկանում ենք, որ Արցախ աշխարհն այժի էր ընկնում իր բնական թանկարժեք քարերի հանքերով: Հիշատակվում է Գանձասարի և Խոթա վանքերի վանքապատկան կալվածքների մասին [48, էջ 1], որոնց վերաբերյալ տեղեկություններ կար էջմիածնի Սինոդում, Շուշիի կոնսիստորիայում, Թեամական դպրոցի հոգաբարձության արխիվում [40, էջ 2]: Հոդվածագիրը նշում է, որ հայ վարդապետ Խաչիկը Գանձասարում եղած ժամանակ իր աչքով տեսել էր այդ քարահանքերը: Սակայն համապատասխան մասնագետ չլինելու պատճառով չի կարողացել դրանց շահագործման մասին մտածել: Այնուհետև, Գանձասարից ոչ հեռու գտնվող Դոլուխանյանի կալվածների նախկին կառավարիչ պարոն Շահնազարյանը՝ իբրև անտառապետ մասնագետ իր ուժերի ներածին չափ երկար ժամանակ ուսումնասիրելով այդ կալվածքը Գանձասարում՝ գտել էր բազմաթիվ հանքեր՝ պղինձ, արձիճ, երկաթ, արծաթ և այլն: Եվ որ նա դիմել էր համապատասխան պետական մարմիններին՝ դրանց շահագործման կապակցությամբ [40, էջ 2]:

Ուշագրավ են Հաղրութի օրիորդաց դպրոցի վերաբերյալ տեղեկությունները: Ըստ թերթում գետեղված տեղեկության՝ 20-րդ դարի սկզբին վերաբացվեց Հաղրութի փակված աղջկանց դպրոցը, որը հաճախակի էր փակվում ու բացվում: Թերթի տեղեկություններից դատելով, կարող ենք նշել, որ փակման հիմնական պատճառները բխեցվել են դպրոցի ներքին խնդիրներից: Երբեմն դա կապված էր վարժուհիների դասավանդման մեթոդների ոչ ճիշտ կիրառման հետ, որը հանգեցնում էր աշակերտուհիների ծնողների բուռն դժգոհություններին: Թերթն այդպիսի մի օրինակ բերում է 1902 թ. Կատարված դեպքից, երբ այդ բազմամարդ դպրոցից⁵ աշակերտների մեծ մասը ստիպված էր դուրս գալ [45, էջ 2]:

Հարկ է նշել, որ 1903 թ. տվյալներով Հաղրութի և նրա շրջակա 12 գյուղերի վրա նշանակ-

ված է մեկ ընդհանուր համայնքապետ, որը Հաղրութում ուներ իր կանոնավոր գրասենյակը և մի գրագիր [45, էջ 2]:

Բացի եկեղեցական-ծխական, մասնավոր դպրոցներից, Արցախի որոշ գյուղերում գործում էր գորգագործության և ձեռագործության դպրոցներ, որտեղ օրիորդները և կանայք սովորում են տիրապետել հայկական կիրառական արվեստի այդ ճյուղերի նրբություններին: Այդպիսի մի դպրոց գործում էր Գետաշեն գյուղում, որտեղ կանայք և աղջիկներ գործել էին մի շարք հանգուցավոր գործվածքներով գորգեր [53, էջ 2]: Հավելենք, որ Հայաստանում թել ներկելու համար օգտվել էին հանքային, կենդանական (որդան կարմիր) և հատկապես բուսական (տորոն, դեղնածաղիկ, ընկույզի, սոխի կեղև և այլն) ներկերից, գույներն ամրացվել էին հանքային նյութերով: Թերթը շարունակելով տալ Գետաշենում գործված գորգերի բնութագրական հատկանիշների նկարագրությունը՝ ընդգծում է, որ գորգերը չնայած գործվում էին ասիական ձևով, բայց բավականին մոտ էին եվրոպական ճաշակին, որի գույներից մարդ միանգամից զմայլվում է [53, էջ 2]: Իսկ երիտասարդ տղաները սովորում էին հյուսնության և դարբնության արհեստը: Հայտնի էին Վարդագար Պառավեանցի պատրաստած գործիքները [53, էջ 2]:

Չնայած 1905 թ. սկսված հայ-թաթարական բախումներին⁶, Արցախում սկսեցին բացվել հայկական դպրոցների մի մասը [58, էջ 3]: Շուշիի հայկական թաղամասի ավերման, հայկական դպրոցների վերաբացման, այդ բախումների հետևանքով տուժված հայերին ուղղված բարեգործական աշխատանքների [60 էջ 4; 55 էջ 1] մասին հիշատակվում է թերթի տարբեր համարներում [57, էջեր 1-2; 59 էջ 3]: Սակայն, այստեղ նկատենք, որ հայկական դպրոցների բացվելը չի նշանակում, որ երեխաները շարունակում էին ստանալ կանոնավոր կրթություն, քանզի աշակերտների զգալի մասը խուսափում էր հաճախել քաղաքային դպրոց: Ըստ թերթի հերթական համարի տեղեկության՝ Շուշիի քաղաքային ուսումնարանում 1905 թ. պարապմունքները դեռ չէին սկսվել, քանզի թաթարները օգտվելով ժամանակաշրջանի խառ իրավիճակից՝ դպրոցի թաթարամոլ տեսչի աջակցությամբ, ուսումնարանը տեղափոխել էին իրենց պատկանող թաղամաս:

⁶ Հայ-թաթարական ընդհարումներ – 1905-1907 թթ. Ռուսական հեղափոխության ժամանակ տեղի ունեցած ռազմական բախումներ: 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին «կովկասցի թաթարներ» էին կոչվում ժամանակակից Ադրբեջանի թուրքերը: Չինված բախումները տեղի են ունեցել հատկապես Ելիզավետպոլի նահանգում, մասամբ նաև՝ Երևանի նահանգում, Թիֆլիս, Շուշի, Բաքու քաղաքներում: Հայ-թաթարական ընդհարումների զլխավոր դրդապատճառները տնտեսական, քաղաքական և կրոնական բնույթ ունեին:

⁵ Հաղրութի օրիորդաց դպրոցի աշակերտների թիվը 1903 թ. դրությամբ հասնում էր 70-ի: [45, էջ 2]:

Այդ պատճառով հայ աշակերտները, որոնք այդ դպրոցի 90 տոկոսն էին կազմում, չէին հաճախում դպրոց՝ խուսափելով դժբախտ դեպքերից [59, էջ 3]:

«Նոր դար» թերթի 1905 թ. համարներից մեկը հիշատակում է, որ այդ ժամանակ Արցախի թեմի ծխական դպրոցների համար թեմական տեսուչ էր հրավիրվել Ներսես վարդապետ Տեր-Միքայելյանը [59, էջ 3]: Վերջինիս կողմից թողնված մեկ գրառման մեջ նշվում է, որ նա՝ որպես Թեմական դպրոցի տեսուչ դրսից հրավիրում էր հայտնի ուսուցիչների՝ այդ դպրոցում դասավանդելու համար [56, էջ 1]:

Թերթի 1905 թ. համարներից մեկում գետեղված Արմ. Աղախանյանի հոդվածում նշվում է, որ նույն ուսումնական տարում բացվում է նաև Մարիամյան օրիորդաց ծխական դպրոցը, որի կապակցությամբ Շուշի քաղաքի չորս եկեղեցիներից յուրաքանչյուրի ծխականների ժողովն ընտրեց չորսական պատգամավոր՝ այդ դպրոցի համար հոգաբարձուներ ընտրելու [58, էջ 3]:

Եզրակացություն: Ընդհանրացնելով մեր ուսումնասիրությունը՝ հիմնված «Նոր դար» թերթում գետեղված նյութերի վրա՝ նշենք, որ 20-րդ դարի սկզբներին Արևելյան Հայաստանում շարունակվել էր խորանալ տնտեսական, քաղաքական ճգնաժամը, որն իր անմիջական բացասական ազդեցությունն էր ունեցել հայկական կրթության բնականոն զարգացման վրա: 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Կովկասում հաստատված գոլիցինյան ռեժիմը շարունակել էր ուժեղացնել հայահալած քաղաքականությունը: Փակվեցին հայկական դպրոցները, խիստ հսկողության տակ դրվեց հայ մամուլը: Հայերի դեմ ծավալված ուժգին հալածանքի պայմաններում, ինչպես հայոց մնացած թեմերում, այնպես էլ Արցախի թեմում կրթական գործի զարգացման համար ստեղծվեցին անբարենպաստ պայմաններ. կառավարության որոշմամբ մոտ տասը տարի շարունակ (1896-1905 թթ.) շարունակվեց փակված մնալ հայկական դպրոցների մեծ մասը, իսկ շատ քիչ մասը գործում էր գաղտնի պայմաններում: 1905-1906 թթ. ուս տարում Արցախի թեմում վերաբացվեցին հայկական դպրոցները, որոնք կանգնել էին լուրջ խնդիրների առաջ: Կրթության զարգացմանը խանգարող գործոններից էին 1905-1907 թթ. ընթացող հայ-թաթարական բախումները: Չնայած վերոնշյալ կանխարգելիչ գործոններին, այնուամենայնիվ Արցախի թեմում շարունակել էին գործել թեմական, ռեալական, օրիորդաց, Մարիամյան, արևտրական, գորգագործության և ձեռագործության դպրոցները, որոնց գործունեության ծավալման մեջ «Նոր դար» թերթն արժևորել էր Արցախի թեմի Սրբազան առաջնորդների, առանձին անհատների և բարեգործական ընկերության դերակատարությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 94, ց 9, գ. 58:
2. ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 3, 4:
3. «Մուրճ», 1901, N 7(հուլիս):
4. «Մշակ», 1905, N 2 (5 հունվարի):
5. «Նոր դար», 1899, N 81 (8 մայիսի):
6. «Նոր դար», 1900, N 4 (11 հունվարի):
7. «Նոր դար», 1900, N 7 (14 հունվարի):
8. «Նոր դար», 1900, N 37 (26 փետրվարի):
9. «Նոր դար», 1900, N 38 (29 փետրվարի):
10. «Նոր դար», 1900, N 82 (5 մայիսի):
11. «Նոր դար», 1900, N 86 (11 մայիսի):
12. «Նոր դար», 1900, N 87 (12 մայիսի):
13. «Նոր դար», 1900, N 88 (13 մայիսի):
14. «Նոր դար», 1900, N 136 (22 հուլիսի):
15. «Նոր դար», 1900, N 148 (23 օգոստոսի):
16. «Նոր դար», 1900, N 156 (2 սեպտեմբերի):
17. «Նոր դար», 1900, N 165 (15 սեպտեմբերի):
18. «Նոր դար», 1901, N 2 (4 հունվարի):
19. «Նոր դար», 1901, N 12 (20 հունվարի):
20. «Նոր դար», 1901, N 26 (10 փետրվարի):
21. «Նոր դար», 1901, N 27 (13 փետրվարի):
22. «Նոր դար», 1901, N 29 (16 փետրվարի):
23. «Նոր դար», 1901, N 35 (27 փետրվարի):
24. «Նոր դար», 1901, N 36 (28 փետրվարի):
25. «Նոր դար», 1902, N 1 (1 հունվարի):
26. «Նոր դար», 1902, N 11 (19 հունվարի):
27. «Նոր դար», 1902, N 12 (22 հունվարի):
28. «Նոր դար», 1902, N 28 (14 փետրվարի):
29. «Նոր դար», 1902, N 34 (26 փետրվարի):
30. «Նոր դար», 1902, N 36 (28 փետրվարի):
31. «Նոր դար», 1902, N 85 (31 մայիսի):
32. «Նոր դար», 1902, N 103 (10 օգոստոսի):
33. «Նոր դար», 1902, N 106 (15 օգոստոսի):
34. «Նոր դար», 1902, N 126 (13 սեպտեմբերի):
35. «Նոր դար», 1902, N 128 (18 սեպտեմբերի):
36. «Նոր դար», 1903, N 8 (15 հունվարի):
37. «Նոր դար», 1903, N 15 (24 հունվարի):
38. «Նոր դար», 1903, N 16 (25 հունվարի):
39. «Նոր դար», 1903, N 35 (22 փետրվարի):
40. «Նոր դար», 1903, N 50 (15 մարտի):
41. «Նոր դար», 1903, N 55 (22 մարտի):
42. «Նոր դար», 1903, N 56 (25 մարտի):
43. «Նոր դար», 1903, N 78 (8 մայիսի):
44. «Նոր դար», 1903, N 84 (20 մայիսի):
45. «Նոր դար», 1903, N 99 (1 հունիսի):
46. «Նոր դար», 1903, N 101 (12 հունիսի):
47. «Նոր դար», 1903, N 104 (17 հունիսի):
48. «Նոր դար», 1903, N 112 (27 հունիսի):
49. «Նոր դար», 1903, N 114 (1 հուլիսի):
50. «Նոր դար», 1903, N 115 (2 հուլիսի):
51. «Նոր դար», 1903, N 135 (2 օգոստոսի):
52. «Նոր դար», 1903, N 154 (30 օգոստոսի):
53. «Նոր դար», 1903, N 190 (24 հոկտեմբերի):
54. «Նոր դար», 1905, N 4 (6 սեպտեմբերի):
55. «Նոր դար», 1905, N 12 (20 սեպտեմբերի):
56. «Նոր դար», 1905, N 14 (22 սեպտեմբերի):
57. «Նոր դար», 1905, N 28 (9 հոկտեմբերի):
58. «Նոր դար», 1905, N 30 (12 հոկտեմբերի):
59. «Նոր դար», 1905, N 40 (4 նոյեմբեր):
60. «Նոր դար», 1905, N 46 (20 նոյեմբերի):

61. **Ավանեսյան Ա., Հարությունյան Գ.,** Արցախի կրթական համակարգը: - Ստեփանակերտ, 2014:
62. **Արզումանյան Մ.,** 1905-1907 թթ. Հեղափոխությունը Ռուսաստանում // «Պատմաբանասիրական հանդես», 1975, N 3:
63. **Ավագյան Ս.,** Ղարաբաղի մամուլի պատմություն (1828-1920): - Երևան, 1989:
64. **Բարխուդարեանց Մ.,** Արցախ, Բագու, 1895: - Երևան, 1996:
65. **Բալայան Վ.,** Արցախի պատմություն: - Երևան, 2002:
66. **Գրիգորյան Հ., Հարությունյան Գ.,** Շուշիի Ռեպրականը: - Երևան, 2001:
67. **Գանիեյան Մ.,** 1903 թ. հունիսի 12-ի հայոց եկեղեցու գույքի եվ կալվածքների բռնագրավման մասին օրենքը, նրա առաջին արձագանքները հայ իրականության մեջ: // «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2014:
68. **Երկանյան Վ.,** Հայկական մշակույթը 1800-1917 թթ.: - Երևան, 1982:
69. **Լեո,** Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի (1838-1913 թթ.): - Թիֆլիս, 1914:
70. **Խոտոյան Ս.,** Արևելահայ դպրոցները 1830-1920 թթ.: - Երևան, 1987:
71. **Կարապետյան Ս.,** Հյուսիսային Արցախ: - Երևան, 2004:
72. **Հարությունյան Գ.,** Ժողովրդական կրթության զարգացումը Լեռնային Ղարաբաղում: - Երևան, 1984:
73. Յիշատակարան Ղարաբաղի (Արցախի) Հայոց Թեմական Հոգևոր դպրանոցի: - Շուշի, 1901:
74. **Հարությունյան Գ.,** Արցախահայ դպրոցը 5-19-րդ դարերում: - Ստեփանակերտ, 2000:
75. **Հարությունյան Գ.,** Արցախահայ դպրոցը 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին: // «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, 2002, N 4:
76. **Հարությունյան Մ.,** Մշակութային կյանքը Լեռնային Ղարաբաղում (Արցախում) 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին: - Ստեփանակերտ, 2010:
77. Ղարաբաղի Հայոց հոգևոր թեմական դպրանոցի 75-ամեակը: - Շուշի, 1913:
78. Ղարաբաղու Տիրամայր Սուրբ Մարիամու օրիորդաց ուսումնարանի բացվելը: - Շուշի, 1864:
79. **Մինասյան Մ.,** Ղարաբաղի թեմ: // «Արարատ», հ. Է, 1914:
80. **Մուրադյան Գ.,** Արևելյան Հայաստանը 20-րդ դարի սկզբին: // «Էջմիածին», 2005, հ. Բ-Գ:
81. **Տեր-Գասպարյան Ռ.,** Շուշի քաղաքը: - Երևան, 1993:
82. **Витте С.,** Воспоминания, т. 2. - Москва, 1960.
83. Первая русская революция 1905 года, <https://www.pnp.ru/social/pervaya-russkaya-revolyuciya-proshla-115-let-nazad.html>

*Տժանա/Հանձնվել է՝ 03.05.2025
 Рецензирована/Գրախոսվել է՝ 09.05.2025
 Принята/Ընդունվել է՝ 16.05.2025*